



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՅԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ
ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ**

Կիրակի, 20 Դեկտեմբերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ Լաս Վեկասի Լուտերական եկեղեցւոյ մէջ: Ս. Սեղանին պիտի սպասարկեն Հոգշ. Ս. Ներսէս Աբեղայ Շեխուկեան (հոգեւոր հովիւ Վենեզուելայի հայոց, որ հիւրաբար մեր թեմը կը գտնուի) եւ Արժ. Ս. Աւետիս Քիւյ. Թորոսեան:

Յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ի յիշատակ եկեղեցւոյ ու գաղութին բազմամեայ նուիրեալ ծառայողներէն հանգուցեալ Սեդա Տեր Կարապետեան Պարնզի, անոր մահուան առաջին տարելիցին առիթով:

Պատարագէն վերջ, եկեղեցւոյ սրահին մէջ, Առաջնորդ Սրբազանը հանդիպում պիտի ունենայ եկեղեցւոյ ծխական համայնքին հետ, գաղութի ապագայ ծրագիրներուն մասին:

**PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY
AT THE LAS VEGAS PARISH**

On Sunday, December 20th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at the Las Vegas parish.

Very Rev. Fr. Nerseh Shekhougian, Dean of the Venezuela Parish who is here on a visit, and Rev. Fr. Avedis Torossian will assist at the altar.

At the conclusion of Divine Liturgy the Prelate will preside over the requiem service for long-time church and community member Seda Der Garabedian-Barnes on the first anniversary of her passing.

After the church service the Prelate will meet with members of the parish council and community.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՈՍՏԻԿԱՆԱԿՊԵՏ ՌԱՆ ՏԷ ՓՈՄՓԱՅԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 17 Դեկտեմբերի յետմիջօրեին, ժամը 1:30ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Կլենտեյլի նոր ոստիկանապետ Ռան ՏԷ Փոմփայի այցելութիւնը: Ոստիկանապետին կ'ընկերանար իր տեղակալներէն Իան Կրայմզ: Հանդիպումին ներկայ եղան Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր Հովիւներէն Արժ. Տ. Արտակ Քիւյ. Տեմիրճեան, Ազգային Վարչութեան անդամներէն Տոքթ. Նաւասարդ Գազազեան, Տիար Կարօ Էշկիեան եւ Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանի տնօրէն Տիար Վազգէն Մատնէլեան:



Ռան Տեփոմիս վերջերս ստանձնած է Կլենտեյլ քաղաքի ոստիկանապետի պաշտօնը: Ան Ազգային Առաջնորդարան եկած էր Առաջնորդ Սրբազանին լուսաբանութիւններ տալու իր աշխատանքներուն մասին, որուն համար կը կարօտի նաեւ հայ համայնքի առաջնորդներու եւ պատասխանատու

շրջանակներու աջակցութեան: Հիւր ոստիկան պատասխանատուները խօսեցան իրենց աշխատանքին ընթացքին Կլենտեյլի բնակչութեան, ի շարս որոնց՝ հայերու հետ իրենց դիմագրաւած հարցերու մասին, ընդգծելով, որ այս ծիրին մէջ կը խնդրեն համայնքի պատասխանատուներուն ու գաւակներուն գործակցութիւնը:

Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց ոստիկանապետը, անոր յաջողութիւն մաղթեց իր նոր առաքելութեան մէջ, միաժամանակ ընդգծելով, որ հայութիւնը միշտ ալ ընդառաջած է իր քաղաքացիական ու քաղաքացիի պարտականութիւններուն: Ան նաեւ յիշեցուց, որ Ազգ. Առաջնորդարանն ու հայկական շրջանակներ պատրաստակամ են գործակցելու ոստիկանութեան թէ այլ պատասխանատուներու հետ, պահպանելու համար քաղաքին անդորրութիւնն ու բարգաւաճումը: Վերջապէս, համաձայնութիւն գոյացաւ նմանօրինակ հանդիպումներ կրկնելու մասին: Այս ծիրին մէջ, կը նախատեսուին յաճախակի հանդիպումներ՝ ոստիկանութեան ու հայ համայնքին միջեւ:

PRELATE WELCOMES GLENDALE POLICE CHIEF

On the afternoon of Thursday, December 17th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Glendale Chief of

Police Ronald L. De Pompa, who was accompanied by Lieutenant Ian Grimes. Participating in the meeting was Rev. Fr. Ardak Demirjian, Executive Council members Dr. Navasart Kazazian and Mr. Garo Eshgian, and Principal of Chamlian School Mr. Vazken Madenlian.



During his visit, De Pompa, who was recently appointed Chief of Police, spoke of his responsibilities and of garnering the support of Armenian community leaders and members. Chief De Pompa and Lieutenant Grimes also shed light on their service within the Glendale community and on challenges they face.

The Prelate congratulated Chief De Pompa and wished him success in his new position. The Prelate asserted that the Prelacy and the Armenian community are ready to collaborate with the police department for the betterment and advancement of the community. The meeting concluded with an understanding to have similar meetings in the future between the police department and community members.

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ ԵՒ ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ ՍՏԺԱՆ ԳԱՊԱՏԱՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Չորեքշաբթի, 16 Դեկտեմբերի



Երեկոյեան, Կլենտլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն տեղի ունեցաւ Եկեղեցւոյ նուիրեալ ծառայողներէն ու ազգային գործիչ հանգուցեալ Ստեփան Գապատայեանի յիշատակին, Նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր:

Եկեղեցական արարողութենէն ետք, յուշ-երեկոյ մը տեղի ունեցաւ Կլենտլի Երիտասարդաց կեդրոնին մէջ, կազմակերպութեամբ՝ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ,

Վահան եւ Անուշ Շամլեան Ազգային Վարժարանի, Ռիչըրտ Թիւֆէնքեան Մանկամտւոր-Մանկապարտեզի, Զ.Յ.Դ. «Ահարոնեան» եւ «Չաւարեան» Կոմիտէներուն եւ Զ.Մ.Ը.Մ. «Արարատ» Մասնաճիւղին:

Հանդիսավարն էր Տիար Գեորգ Պետիկեան: Սրտի խօսք արտասանեցին յաջորդաբար՝ Տիկին Ռիմա Պողոսեան (յանուն Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան), Տիար Հրայր Շիրիքեան (Զ.Յ.Դ. Չաւարեան Կոմիտէ), Տիկին Արսինէ Աղազարեան (Թիւֆէնքեան Մանկամտւոր), Տիար Ռուբէն Կիւրճեան (Զ.Մ.Ը.Մ.ի Արարատ Մասնաճիւղ), Տիար Վահէ Պօզոյեան (Զ.Յ.Դ. Ահարոնեան կոմիտէ Կոմիտէ) եւ Տիար Վազգէն Մարտէլեան (Ազգ. Վ. եւ Ա. Շամլեան վարժարան): Յայտագիրին երկու երգով մասնակցութիւն բերաւ Տիկին Ռիմա Կարապետեան, դաշնակի ընկերակցութեամբ Տիկին Արմինէ Տերտերեանի:

Յարգանքի երեկոյի եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը, վեր առնելով հանգուցեալին ծառայական կեանքի օրինակելի երեսները:

PRELATE PRESIDES OVER REQUIEM SERVICE FOR STEPAN KABADAYAN

On the evening of Wednesday, December 16th, 2009, a requiem service



for long-time church and community servant Stepan Kabadayan took place at St. Mary's Church in Glendale. The Prelate presided over the service, after which a tribute was held in the Glendale Youth Center. The tribute was organized by St. Mary's Church, Chamlian School, Tufenkian Pre-School, ARF Aharonian and Zavarian

Gomidehs, and Homenetmen Ararat Chapter.

The Master of Ceremonies was Mr. Kevork Bedikian. Remarks were delivered by Mrs. Rima Boghossian (on behalf of St. Mary's Church Board of Trustees), Mr. Hrair Shirikian (ARF Zavarian Gomideh), Mrs. Arsine Aghazarian (Tufenkian Pre-School), Mr. Roupen Gorjian (Homenetmen Ararat Chapter), Mr. Vahe Bozoyan (ARF Aharonian Gomideh), and Mr. Vazken Madenlian (Chamlian School).

Concluding remarks were delivered by the Prelate, in which he lauded the multi-faceted service of Mr. Kabadayan.
